

# **Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության  
կառավարությունը **որոշում է.**

1. «Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անվտանգության  
ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող  
2014-2020 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը  
հաստատելու մասին»  
ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 836-Ն որոշման  
/Որոշում/ 2-րդ կետում «Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի  
և բնական պաշարների նախարարություն» բառերը փոխել  
«Հայաստանի Հանրապետության Էներգետիկ ենթակառուցվածքների և  
բնական պաշարների նախարարություն» բառերով:
2. Որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության Էներգետիկ  
անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների  
իրականացումն ապահովող 2014-2020 թվականների միջոցառումների  
ծրագիր-ժամանակացույցը» շարադրել նոր խմբագրությամբ՝  
համաձայն հավելվածի: